Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1074[7]-16.05.2025-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասում «օրդինատորների» բառը փոխարինել «ռեզիդենտների (օրդինատորների)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական» բառերը փոխարինել «միջին մասնագիտական և բարձրագույն կրթության, ինչպես նաև կլինիկական օրդինատուրայի (կլինիկական ռեզիդենտուրայի)» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Առողջապահության ոլորտի մասնագիտություններով հետավարտական ուսումնառության կազմակերպման կարգը, ներառյալ հիմնական մասնագիտությունների, նեղ և լրացուցիչ մասնագիտացումների ցանկը, ուսումնառության տեսակները (կլինիկական ռեզիդենտուրա, նեղ մասնագիտացմամբ ուսումնառություն), դրանց կազմակերպման և իրականացման պայմանները և վերջնարդյունքները հաստատում է Կառավարությունը՝ լիազոր մարմնի ներկայացմամբ՝ կրթության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցմամբ:»:

Հոդված 3. Օրենքի 35.1 հոդվածում՝

1) 1-ին, 8-րդ, 20-րդ մասերում «ռազմաբժշկական հետբուհական ուսուցում» բառերը փոխարինել «ռազմաբժշկական մասնագիտություններով հետավարտական լրացուցիչ ուսումնառություն» բառերով.

2) 4-րդ մասում «հետբուհական» բառը փոխարինել «հետավարտական լրացուցիչ ուսումնառության» բառերով.

3) 7-րդ մասից հանել «և հետբուհական մասնագիտական» բառերը.

4) ուժը կորցրած ճանաչել 14-րդ մասը.

5) 19-րդ մասում «հետբուհական մասնագիտական կրթություն» բառերը փոխարինել «հետավարտական լրացուցիչ ուսումնառություն» բառերով:

Հոդված 4. Օրենքի 35.5 հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «ռազմաբժշկական հետբուհական ուսուցում» բառերը փոխարինել «ռազմաբժշկական մասնագիտություններով հետավարտական լրացուցիչ ուսումնառություն» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: